ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ*

Վահրամ Բալայան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱրՊՀ

Բանալի բառեր: *Հայ, Ղարաբաղ, Ռուսաստան, Թուրքիա, պայքար, համախմբում, ազատագրություն, ցարիզմ, երկիր, կազմակերպություններ, բռնարարքներ, իշխանություն:*

20-րդ դարի սկզբներին հայությունիր ազատության և անկախության ուղիներում հանդիպեց առավել ծանր իրավիճակների: Եթե նախկինում ցարական իշխանությունները հայության դեմ պայքարում էին ավելի «քաղաքակիրթ» միջոցներով, ընդունվում էին որոշումներ, օրենքներ, կամ էլ հետապնդվում էին առանձին անհատներ, կազմակերպություններ, ապա այս անգամ բռնարարքների ենթարկվեց ողջ ժողովուրդը:

Դարասկզբին դա հիմնականում կապված էր 1903թ. հունիսի 12-ի Նիկոլայ Երկրորդի տխրահռչակ հրամանագրի հետ, որով բռնագրավվեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Հայ պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ ցարական արքունիքն այդ օրենքով փորձում էր փակել հայկական դպրոցները, մշակութային հաստատությունները և սահմանափակել եկեղեցուինքնուրույնությունը[1]:

Մինչդեռ իրականում այն հեռագնա նպատակներ ուներ: Ցարական իշխանությունները լավ հասկանում էին, որ դարերի ընթացքում պետականությունից զրկված հայության համար եկեղեցին ազգային ինքնության և ինքնուրույնության ջատագովն ու դրան հասնելու կազմակերպիչն էր: Մյուս կողմից էլ կրթական հաստատություններում երիտասարդների և ուսուցիչների մեջ խմորվում էին ազատագրական գաղափարները:

Այս հարցում չի կարելի թերագնահատել դարասկզբին Արևմտյան Հայաստանում ծայր առած հակասուլթանական նոր շարժման դերը: Ցարական կառավարությունը մտահոգ էր, որ այդ պայքարի ալիքը կտարածվի նաև Արևելյան Հայաստանում: Մանավանդ տարածաշրջանում, մեծ տերությունների ակտիվացման պայմաններում, կարող էին Ռուսաս-

---

**Հոդվածը ընդունված է 16.10.14:*

[1] *ՀԺՊ, հ. 6, Երևան, 1981, էջ 353; ՊարսամյանՎ., ՀարությունյանՇ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 305:*

տանի համար հետևանքներն անկանխատեսելի դառնալ: Հնարավոր զարգացումները կանխելու նպատակով ցարական արքունիքը վաղօրոք փորձում էր ոչնչացնել իր համար վտանգավոր թիրախները:

Մինչև վերոհիշյալ օրենքի ընդունումը Գ.Գոլիցինը Նիկոլայ Երկրորդին հավաստիացնում էր, որ «մեծ և միացյալ Հայաստան»-ի ստեղծման գործի գլուխ կանգնած է լուսավորչական եկեղեցին և տարեկան հարյուր հազարավոր ռուբլիներ է ծախսվում զենք ու զինամթերք ձեռք բերելու համար[1]:

Գ.Գոլիցինի այս հիմնավորումներին գումարվեց Նիկոլայ Երկրորդի հակահայ տրամադրվածությունը: Նա մի առիթով ասել է. «Իմ անձնական և վաղեմի կարծիքով հայերի հանդեպ ոչ մի վստահություն տածել չի կարելի: Անշուշտ նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում»[2]:

Եվ այսպես, 1903թ.հունիսի 12-ի օրենքը գործածության մեջ դրվեց: Բռնազավթվեց եկեղեցուն պատկանող 1.775.905 ռուբլու արժողության ունեցվածքը[3]: Հայ ժողովուրդն ապրում էր տագնապալի ու խռովահույզ ժամանակներ: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություն էր տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներառվեց նաև արցախահայությունը: Ցույցեր և ընդհարումներ տեղի ունեցան նաև Արցախի մի շարք բնակավայրերում[4]:

Ցարական իշխանությունների դեմ դիմակայության ալիքը չէր մարել, երբ 1905-1906թթ. նույն ուժերի կողմից սանձազերծվեցին ազգամիջյան ընդհարումներ:

Հարկ է նկատել, որ1880-ական թվականներից սկսած՝ Ռուսաստանի ազգայնական տրամադրություն ունեցող գործիչները, որոնք հիմնավորվել էին իշխանական-պետական համակարգում, դարձան պանսլավոնիզմի գաղափարախոսները: Կայսրության տարածքում ապրող փոքր ազգերի ներքին ինքնավարության ամեն մի ձգտում նրանց կողմից գնահատվում էր որպես ռուսական պետության նկատմամբ թշնամական վերաբերմունք:

---

[1] *Ակնունի Է., Դեպի կռիվ, ժնև, 1904, էջ 20-24:*
[2] *Հեղափոխական պայքարի վավերագրեր, Երևան, 1984, էջ 333:*
[3] *Тунян В., Русская политика в Армении: мифы и реалии (конец XVIII – начала XXвв), Ереван, 1998, с. 40.*
[4] *Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 218-221, 235-241, «Դրոշակ», թիվ 2, 1905, էջ 31:*

Ռուս բարձրաստիճան պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները ցարին համոզում էին, որ Այսրկովկասում կապիտալի կուտակումը հայ գործարարների ձեռքում, կրթական ու հանրային կյանքի զարթոնքը, քաղաքական կուսակցությունների եռանդուն գործունեությունը, Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի աննախադեպ վերելքը վաղ թե ուշ իրականություն կդարձնեն հայկական պետության վերականգնման ձգտումը:

Դեռ ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է Հ.Սիմոնյանը «Հայկական ինքնավարության պահանջը, ըստ իշխանությունների, լինելու էր Անդրկովկասի համար ինքնավարություն ձեռք բերելու պահանջի մի մասը: Հետևապես երկրամասի ժողովուրդների պառակտման պայմաններում ընդմիշտ կթաղվեր ոչ միայն հայկական ինքնավարության, այլև Անդրկովկասի ինքնավարության գաղափարը»[1]:

Ըստ էության ռուսական պետության ամենաջերմ պաշտպան և բարեկամ ժողովուրդը թշնամու կերպարանք ստացավ և իր մաշկի վրա զգաց կայսրության մամլիչի սարսափազդու ուժը: Նույնիսկ Գ.Գոլիցինն առաջարկում էր հայ «անջատողականներից» ազատվելու նպատակով ազգովի նրանց աքսորել Սիբիր[2]: Սակայն զինվորական նախարար Կուրոպատկինը կանխեց խելահեղ այդ ծրագիրը[3]:

Անկախ և միացյալ Հայաստանի գաղափարը կատաղության էր հասցնում ինչպես Աբդուլ Համիդին, այնպես էլ՝ Նիկոլայ Երկրորդին: Պատահական չէր, որ 1905-1920թթ. հայկական ջարդերի կազմակերպման մեջ որոշակի դեր խաղաց օսմանիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

Այսրկովկասի տարածքում հայ-թաթարական կռիվները ոչ մի տեղ այնքան կատաղի չեն եղել, որքան Ղարաբաղում և, մանավանդ, նրա կենտրոն Շուշիում: Դա պատահական չէր, որովհետև բազում դարերի ընթացքում թուրք գործիչները համոզվել են, որ դեպի իրենց հայրենիքը՝ Միջին Ասիա ձգվող ճանապարհն անցնում է Նախիջևանով և միատարր հայ բնակչություն ունեցող Ղարաբաղով, որտեղ, մանավանդ, իշխանության առկայությունը համարյա թե անհնարին է դարձնում իրենց դիվային

[1] *Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003, էջ 42:*
[2] *«Վերածնություն», թիվ 40, 1904:*
[3] *Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 84:*

ծրագրերի իրագործումը և հատկապես արևմտյան Այսրկովկասը թուրքացնելու ու վերջնականապես կլանելու գործը:

1905-1906թթ. Լեռնային Ղարաբաղում հայկական կոտորածների ժամանակ մոլեռանդ ամբոխը վանկարկում էր պանիսլամիստական և պանթուրքիստական կարգախոսներ[1]:

Այդ օրերին «Русскиеведомости» թերթը գրել է. «Գերմանիայի իմացությամբ Կոստանդնուպոլսում ձեռնարկվել է մի դավադրություն, որին մասնակցել են հիշյալ խաներն ու բեկերը(խոսքը վերաբերում է Ղարաբաղի խաներին ու բեկերին – Վ.Բ.), նպատակ ունենալով գլխովին բնաջնջել Կովկասում ապրող հայերին ու ջարդել մյուս ազգություններին, որպեսզի թուրքերի համար ճանապարհ բացվի դեպի Կովկաս և կազմավորվի Նախիջևանի խանությունը …»[2]:

Քաջածանոթ լինելով պանիսլամիստական և պանթուրքիստական գաղափարներով առաջնորդվող թուրք առաջնորդների գործելակերպին՝ արցախահայության ծոցից ծնված մեծ ֆիդայի, ռազմական և քաղաքական գործիչ Նիկոլ Դումանը 1905-1906թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ կանխատեսել էր Մեծ եղեռնը և հորդորել արևմտահայությանը՝ օգտագործել արևելահայության ինքնապաշտպանության մարտավարական փորձը: 1907թ. Ժնևում հրատարակած իր «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքույկի մեջ Ն.Դումանը գրել է. «Նույն փոթորիկը ըստ իս կրկնվելու է Տաճկահայաստանում, ավելի ահավոր կերպով: Մեզ կմնա ինքնապաշտպանությունը դնել ամուր հիմքերի վրա»[3]:

Ցավալիորեն, մեծ հայրենասերի հորդորներն ու խորհուրդները 1915թ. արևմտյան Հայաստանում անտեսվեցին, և հարյուր հազարավոր երիտասարդներ, թշնամուն դիմադրելու փոխարեն, հլու հնազանդ մորթվեցին Միջագետքի անապատներում:

1905-1906թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ հայությունն ստիպված էր կռվել երկու ճակատով՝ ինչպես թուրքերի, այնպես էլ՝ կառավարության կանոնավոր զորքերի դեմ:

---

[1] *ԲալայանՎ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 273: «Դրոշակ», թիվ 11(164), նոյեմբեր, 1905, էջ 167: ,,Всеподданейшая записка, содержащая главнейшие выводы отчета о произведенной в 1905 году, повысочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии'', СПб., 1905, с. 4-5.*

[2] *,,Русские ведомости'', N 173, 1905.*

[3] *Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան, Ժնև, 1907, էջ 64:*

Հարկ է նկատել, որ 1905-1906թթ. ծանր ու տագնապալի օրերին պետականությունից ու սեփական իշխանություններից զուրկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու բարդ ու պատասխանատու գործը ստանձնել էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում»- գրել է Նիկոլ Դումանը[1]: Նման գործելակերպի շնորհիվ հայությունը փրկվեց վերահաս մասսայական ջարդերից:

Չնայած 1903-1905թթ. եկեղեցական գույքի պետականացման և 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայ ժողովուրդը մարդկային և նյութական մեծ կորուստներ ունեցավ, այնուամենայնիվ, ինքնապաշտպանական մղումները նոր լիցք հաղորդեցին հայկական պետականության վերականգնման գաղափարին:

Ցարական արքունիքի բռնի մեթոդները հակառակ ազդեցությունն ունեցան: Հայ ժողովուրդը գիտակցեց, որ անկախ ազգային պետությունը միայն կարող էր դառնալ լիիրավ և ստեղծագործ կյանքի միակ երաշխավորը:

Այս երկու ազդակները մեծապես հեղաշրջեցին կովկասահայության կյանքը: Հայ մարդու մեջ սպանվեց ստրուկի հոգեբանությունը: Հայ ժողովուրդը համոզվեց, որ, սեփական ներուժի վրա հենվելով, կարելի էր լուծել թերևս անլուծելի համարվող ամեն մի խրթին հարց:

Մարտական գործողությունների ընթացքում հայ ժողովուրդը մեկ միասնական ճակատ հարդարեց: Ազգային շաղախով իրար կապվեցին արևմտահայերն ու արևելահայերը: «Հայությունը մեկ է,- ասում է Անդրանիկը,- ըլլայ Կովկաս թե Տաճկահայաստան…: Ազգային վտանգն ուրոր ծայր տար՝ ամեն հայու պարտականությունն է փութալ դեպի վտանգը…»[2]: Այդ օրերին անուշի էին եկել հայ հանրության բոլոր շերտերը՝ դրամատեր-գործարարն ու բանվորը, շինականն ու մտավորականը, ասպարեզում գտնվող քաղաքական հիմնական ուժերն ու հասարակական-բարեգործական հաստատությունները:

[1] *Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության, Երևան, 1992, էջ 7:*
[2] *«Ռազմիկ», թիվ 93, 20 սեպտեմբերի, 1906:*

Ցարական արքունիքը և թրքությունը հասկացան, որ ներդաշնակ միասնականությամբ հայությունն անպարտելի ուժ է: Տարեցտարի այդ ուժը տարածաշրջանում դառնալու էր գործոն:

Պատմական այս դասերը, ինչպես 1917-20թթ., այնպես էլ՝ նորօրյա ժամանակներում իրենց դրական ազդեցությունն ունեցան հայկական պետականության կերտման գործում:

1903 թվականից մինչև 1907թ. հայ ժողովուրդը, ինքնապաշտպանական պայքարում թրծված և քաղաքական որոշ փորձառություն ստացած, 1906 թվականից կրկին օրակարգի հարց դարձրեց ազգային ինքնավարության գաղափարը: Այս անգամ նորից ՀՅԴ-ն առաջին շարքերում էր: 1905թ. դաշնակցությունը քննարկման նյութ դարձրեց ոչ միայն Հայաստանի, այլև Այսրկովկասի քաղաքական կարգավիճակի հարցը:

Ըստ ՀՅԴ տեսլականի՝ 1. Անդրկովկասը պետք է դառնա ժողովրդավարական հանրապետություն՝ հիմնված ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվության վրա: 2. Անդրկովկասի ժողովրդավարական հանրապետությունը դառնալու է ապագայում ստեղծվելիք Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության անբաժան մասը: 3. Անդրկովկասի հանրապետությունը ՌՖՀ-ի հետ կապված է լինելու ընդհանուր պետական ինքնապաշտպանության, դրամական և միասնական համակարգի և արտաքին քաղաքականության խնդիրներով: 4. Ներքին վարչական և տնտեսական բոլոր հարցերում Անդրկովկասի հանրապետությունն անկախ է լինելու: Հանրապետությունն ունենալու է իր պառլամենտը և կառավարությունը: 5. Անդրկովկասից ընտրված պատգամավորները դառնալու են Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության պառլամենտի անդամներ: 6. Անդրկովկասյան հանրապետությունը բաժանվելու է կանտոնների և համայնքների, որոնք ունենալու են լայն ինքնավարության իրավունքներ: 7. Կանտոնների կազմավորման հիմքում ընկած են լինելու միատարր ազգաբնակչություն ունեցող տարածքները: Կանտոնները կամ գավառներն ունենալու են իրենց օրենսդրությունը: Դպրոցներում կրթությունը տարվելու էր մայրենի լեզվով: 8. Դաշնային հանրապետության մեջ բոլոր ազգերն ու կրոնական փոքրամասնությունները հավասար են լինելու: Վերացվելու են բոլոր դասային և այլ կարգի

արտոնությունները: 9. Բոլոր պաշտոնյաներն ընտրվելու են ժողովրդի կողմից[1]:

1906թ. նոյեմբերի 12-ին հրավիրվեց հայ սահմանադիր-ռամկավար (դեմոկրատական) կուսակցության հիմնադիր ժողովը, որը Կովկասի և կովկասահայության վերաբերյալ սահմանեց հետևյալ սկզբունքները.

1. Հասնել նրան, որ Այսրկովկասը ստանա ինքնավար կարգավիճակ, որը պիտի ունենա օրենսդիր մարմին՝ համաանդրկովկասյան սեյմ: 2.Հայկական բոլոր հիմնարկությունները վերակազմակերպել ժողովրդավարական հիմունքներով: 3. Հայությունը պիտի ունենա ազատ կուլտուրական ինքնորոշման իրավունք: 4. Կովկասի բոլոր ազգերը պետք է ապրեն համագործակցաբար՝ առանձնակի տեղ տալով մշակութային ասպարեզին[2]:

Քաղաքական այս խմորումների հիմքերի վրա 1916թ. նորից վիճաբանությունների առարկա դարձավ Այսրկովկասի նոր սահմանագծման հարցը: Հայ հանրությունը դժգոհ էր խառը ազգային կազմ ունեցող վարչական միավորների գոյության փաստից: Հայ գործիչները քաջ գիտակցում էին, որ նման վարչական միավորներով անհնարին էր Այսրկովկասում ազգերի միջև համերաշխություն պահպանել, իսկ ապագայում ֆեդերատիվ պետություն ունենալու գաղափարի իրագործումը փաստացի անհասանելի էր դառնում:

1916թ. տվյալներով Ելիզավետպոլի նահանգում 911.684 մարդ էր ապրում, որոնցից 320.980-ը շիա մահմեդականներ էին (35.2տոկոս), 274.431-ը՝ սուննի մահմեդականներ (30.1 տոկոս), 256.207-ը՝ հայեր (28.1 տոկոս), իսկ 60.056-ը այլազգիներ էին (6.6 տոկոս), որոնց մեծամասնությունը քրիստոնյաներ էին[3]:

Այդպիսի խայտաբղետ ազգաբնակչություն ունեցող նահանգում ցարական կառավարության համար «դատավորի» կարգավիճակը մշտապես ապահովված էր: Նույն ժամանակահատվածում Ելիզավետպոլի նահանգի կազմում հայտնված Արցախի պատկերն այլ էր: Այստեղ ապրում էր 294.857 մարդ, որոնցից 207.160-ը (70 տոկոս) հայեր էին,

[1] *Նյութեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, Պեյրութ,1976, էջ 326:*
[2] *Սիմոնյան Հ., նշվ. աշխ., գիրք II, էջ 97:*
[3] *Ռուբէն, Գանձակ-Ղարաբաղի վէճը, «Դրոշակ», թիվ 2, 1926, էջ 47:*

50.000-ը (16.4 տոկոս)՝ շիա մահմեդականներ, 25.000-ը (9.1 տոկոս)՝ սուննի մահմեդականներ, իսկ 12.697-ը (4.5 տոկոս) այլազգիներ էին[1]:

Այսրկովկասի հայկական տարածքների ազգագրական դեմքն աղճատումից փրկելու նպատակով 1916թ. հայերը կազմեցին և արքունիք ներկայացրին տարածաշրջանի վարչական բաժանման նոր նախագիծ: Ըստ այդ նախագծի՝ Այսրկովկասի հայկական և միաժամանակ հայաբնակ շրջանները կազմելու էին կամ մեկ նահանգ, կամ էլ բաժանվելու էին 4 փոքր նահանգների՝ Երևանի, Լեռնային Գանձակի կամ Ղարաբաղի, Ալեքսանդրապոլի և Կարսի: Այս նորմոտեցումը ենթադրում էր Այսրկովկասի արևելյան հատվածը բաժանել երկու մասի՝ հայկական և թաթարական: Հայկական մասի մեջ, բացի Երևանի նահանգից, մտնելու էին Գանձակի նահանգի Ղազախ, Գանձակ, Ձևանշիր, Շուշի գավառների լեռնային մասերը և ամբողջ Զանգեզուրը: Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ հայկական և թաթարական: Թիֆլիսի նահանգից Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը միացվելու էին Ալեքսանդրապոլի նահանգին[2]:

Թեպետև այս նախագիծը ռուսական կառավարության կողմից հավանության արժանացավ, սակայն կյանքում չիրագործվեց:

Այսպիսով, 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ծավալված իրադարձությունները հայ հանրության հասարակական, քաղաքական շրջանակներին համոզեցին, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ցարական Ռուսաստանի համար խորթ է ազգային պետականության, նույնիսկ ինքնավարության ամեն մի ձգտում: Հայ ժողովրդի լավագույն զավակները հասկացան, որ համազգային նշանակության հիմնահարցերը միայն ու միայն կարելի էր լուծել միասնականությամբ և ողջ հայության գործուն մասնակցությամբ: 20-րդ դարի սկզբներին առաջին գործնական քայլերը կատարվեցին հայության համախմբման, ուժերի մեկտեղման և այդ ամենը նպատակաուղղման համար: Այդ նոր կուտակումները հանգեցրին ազգային պետականության վերակերտմանը:

---

[1] *Գիիլխանդանեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմությունը, մաս Ա, Փարիզ, 1943,էջ 259:*
[2] *Նույն տեղում:*

Ամփոփում

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ծավալված իրադարձությունները հայ հանրության հասարակական, քաղաքական շրջանակներին համոզեցին, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ցարական Ռուսաստանի համար խորթ է ազգային պետականության, նույնիսկ ինքնավարության ամեն մի ձգտում: Հայ ժողովրդի լավագույն զավակները հասկացան, որ համազգային նշանակության հիմնահարցերը միայն ու միայն կարելի էր լուծել միասնականությամբ և ողջ հայության գործուն մասնակցությամբ: 20-րդ դարի սկզբներին առաջին գործնական քայլերը կատարվեցին հայության համախմբման, ուժերի մեկտեղման և այդ ամենը նպատակաուղղման համար: Այդ նոր կուտակումները հանգեցրին ազգային պետականության վերակերտմանը:

Процесс национальной консолидации армян в начале 20 века

Ваграм Балаян

Резюме

Ключевые слова: *армянин, Карабах, Россия, Турция, борьба, объединение, освобождение, царизм, страна, организация, насилие, власть.*

События 19-го и начала 20 в. убедили общественные, политические круги армчнской общественоcти, что как для Турции, так и для царской России чуждо всякое стремление к национальной государственности, даже автономии. Лучшие сыны армянского народа поняли, что задачи общенационального значения можно решить лишь только единством и деяйственным участием всего армянского народа. В начале 20 в. были сделаны первые шаги по консолидации потенциала армян для достижения основной цели. Всеэтопривело к воссозданию национальной государственности.

The process of national consolidation of Armenians at the beginning of the 20th century

Vahram Balayan

Summary

Key words: *armenian, Karabakh, Russia, Turkey, struggle, consolidation, liberation, tasrizm, country, organizations, acts of violence, authority.*

Events evolved in the 19th and early 20th centuries convinced the social, political circles of the Armenian community that every single desire for national statehood, even for autonomy is very strange both for Turkey and for the Tsarist Russia. The best sons ofArmenian people have understood that problems ofnational significance were possible to solve only with unity and with the active participation of all Armenians. At the beginning of the 20th century the first practical steps were takentounite, to combine their forces and todirect all that. Such accumulations have resulted in the restoration of the State.